



ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե  
 Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ  
 ԱՄՆ Քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամ

**«Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության  
 ծրագիր –2009»**

Ծրագրի հայտարարություն

**I. Ներածություն**

*ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն (ՀՀ ԿԳՆ ԳՊԿ), Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը (ԳԱՏԱՀ) և ԱՄՆ Քաղաքացիական հետազոտությունների և մշակումների հիմնադրամը (ԱՄՆ ՔՀՄՀ) ճշգրիտ, բնական և տեխնիկական գիտությունների բնագավառներում «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր–2009» (ԵԳՀԱԾ) շրջանակներում մրցութային հիմունքներով կհատկացնեն հետևյալ դրամաշնորհները.*

**«Ա–դասի դրամաշնորհ»** – մինչև 1,5 մլն դրամ (\$4,000)՝ մրցույթի արդյունքում մեկամյա անհատական աջակցություն կտրամադրվի ՀՀ պետական ոչ առևտրային կազմակերպությունների ասպիրանտներին: Պայմանավորված հայտի գիտական կարևորությամբ՝ մրցույթի արդյունքում նախատեսվում է տրամադրել շուրջ 20 դրամաշնորհ:

**«Բ–դասի դրամաշնորհ»** –մինչև 7 մլն դրամի (\$18,000) չափ՝ մրցույթի արդյունքում երկամյա աջակցություն կտրամադրվի ՀՀ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հետազոտական գործունեությամբ զբաղվող երիտասարդ (մինչև 35 տարեկան) հետազոտողների խմբին՝ մինչև 3 հոգի, ներառյալ խմբի ղեկավարը: Խմբի ղեկավարը պետք է ունենա գիտական աստիճան, առնվազն երեք տարվա գիտական կամ գիտամանկավարժական գործունեության աշխատանքային ստաժ և հայտի ներկայացման օրվանից հաշվարկված վերջին երեք տարիների ընթացքում հրատարակված առնվազն երեք հոդված: Պայմանավորված հայտի գիտական կարևորությամբ՝ մրցույթի արդյունքում նախատեսվում է տրամադրել շուրջ 11 դրամաշնորհ:

**Ծրագրի նպատակն է:**

- ա) աջակցել երիտասարդ հետազոտողներին բարձր մակարդակի գիտական աշխատանքներ իրականացնելուն,
- բ) նպաստել համաշխարհային գիտական հանրությանը երիտասարդ հետազոտողների ինտեգրմանը՝ միջազգային գիտաժողովներին, սեմինարներին և հանդիպումներին մասնակցելու միջոցով:

Բոլոր աջակցությունները հիմնվելու են նախագծերի անկախ փորձաքննության գնահատականների վրա և բացառապես պայմանավորված կլինեն մրցույթին ներկայացված հայտի գիտական արժանիքներով:

**Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է՝ 2009թ. հոկտեմբերի 30-ն է, ժամը 18:00-ը:**

«Ա» և «Բ» դասերի հայտերը պետք է ներկայացվեն և՛ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ, և՛ ԳԱՏԱՀ, և՛ ԱՄՆ ՔՀՄՀ, իսկ «Գ» և «Դ» դասերի հայտերը՝ միայն ՀՀ ԿԳՆ ԳՊԿ (տե՛ս ստորև բերված V բաժնի հայտի ներկայացման ցուցումները):

**Մրցույթի արդյունքները նախատեսվում է հայտարարել 2009թ.-ի դեկտեմբերի 10-ին: ՀՀ ԿԳՆ ԳՊԿ -ի, ԳԱՏԱՀ-ի և ԱՄՆ ՔՀՄՀ-ի բոլոր որոշումները վերջնական են:**

## **II. Օրագրի ուղեցույց**

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն, ԳԱՏԱՀ-ը և ԱՄՆ ՔՀՄՀ-ը նախատեսում են ճշգրիտ, բնական և տեխնիկական գիտությունների բնագավառներում տրամադրել շուրջ 20 «Ա-դասի դրամաշնորհ»: Դրամաշնորհի առավելագույն չափը 12-ամսյա ժամանակահատվածի համար 1.5 մլն ՀՀ դրամ (US \$4,000) է՝ 11-ամսվա կրթաթոշակով:

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն, ԳԱՏԱՀ-ը և ԱՄՆ ՔՀՄՀ-ը նախատեսում են ճշգրիտ, բնական և տեխնիկական գիտությունների բնագավառներում տրամադրել շուրջ 11 «Բ-դասի դրամաշնորհ»: Դրամաշնորհի առավելագույն չափը մինչև 7.0 մլն ՀՀ դրամ (US \$18,000)՝ երկու տարի ժամանակահատվածի համար (տարեկան 11 ամսվա «անհատական աջակցության» և կրթաթոշակի հաշվարկով):

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն նախատեսում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներում տրամադրել շուրջ 8 «Գ-դասի դրամաշնորհ» այն հետազոտողներին, որոնք չեն կարող մասնակցել «Ա-դասի դրամաշնորհի» մրցույթին: Դրամաշնորհի առավելագույն չափը 12-ամսյա ժամանակահատվածի համար 1.5 մլն ՀՀ դրամ է՝ 11-ամսյա կրթաթոշակով:

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն նախատեսում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բոլոր բնագավառներում տրամադրել շուրջ 4 «Դ-դասի դրամաշնորհ» այն հետազոտողներին, որոնք չեն կարող մասնակցել «Բ-դասի դրամաշնորհի» մրցույթին: Դրամաշնորհի առավելագույն չափը մինչև 7.0 մլն ՀՀ դրամ է՝ երկու տարի ժամանակահատվածի համար (տարեկան 11 ամսվա «անհատական աջակցության» և կրթաթոշակի հաշվարկով):

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն, ԳԱՏԱՀ-ը և ԱՄՆ ՔՀՄՀ-ը խրախուսում են դրամաշնորհի իրականացման ընթացքում միջազգային գիտաժողովներին և հանդիպումներին շնորհառուների մասնակցությունը:

## **III. Մասնակցության իրավունքը**

Յուրաքանչյուր հայտ պետք է համապատասխանի հետևյալ չափորոշիչներին.

1. Դիմորդը պետք է հանդիսանա ՀՀ քաղաքացի կամ ՀՀ մշտական բնակիչ, ինչպես նաև դրամաշնորհի ընթացքում պետք է բնակվի Հայաստանի Հանրապետությունում:

2. ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ը, ԳԱՏԱՀ-ի և ԱՄՆ ՔՀՄՀ-ի աշխատակիցները, ներառյալ հոգաբարձուների և գիտական խորհրդի անդամներն ու խորհրդատուները, իրավունք չունեն հայտ ներկայացնելու: Բացի դրանից, հայտ ներկայացնելու իրավունք չունեն նաև ԳԱՏԱՀ-ի և ԱՄՆ ՔՀՄՀ-ի աշխատակիցների, ներառյալ հոգաբարձուների և գիտական խորհրդի անդամների ու խորհրդատուների, ընտանիքների անդամները: ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի աշխատակիցների ընտանիքի անդամները իրավունք ունեն դիմելու, եթե նրանց ազգականները չեն մասնակցի փորձաքննության և որոշում կայացնելու գործընթացին: Բացի դրանից, հայցվորների, որոնց ազգականները հանդիսանում են ՀՀ ԿԳՆ ԳՊԿ աշխատակիցներ, կողմից ներկայացված նախագծերի գիտական փորձաքննության արդյունքների քննարկման ժամանակ հաշվի կառնվեն միայն ԳԱՏԱՀ-ի և ԱՄՆ ՔՀՄՀ-ի կողմից իրականացված փորձաքննության արդյունքները:
3. Յուրաքանչյուր հայտատու պետք է հանդիսանա շահույթ չհետապնդող հայկական որևէ հետազոտական կազմակերպության՝ համալսարանի, ակադեմիական ինստիտուտի և այլ հետազոտական կառույցի աշխատակից (միայն ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի, ԳԱՏԱՀ-ի և ԱՄՆ ՔՀՄՀ-ի համատեղ մրցույթի համար):
4. Բոլոր նախագծերը պետք է ունենան քաղաքացիական բնույթ, չհետապնդեն ռազմական նպատակներ և իրականացվեն քաղաքացիական հետազոտությունների պայմաններում:
5. Նախագծերը կարող են լինել ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական գիտությունների և ճարտարագիտական բնագավառներից՝ ներառյալ տեխնոլոգիական մշակումները, որոնք առևտրային նշանակության ակնկալիքով նորարարական գործընթացի մաս են հանդիսանում:
6. Սույն ծրագրի շրջանակներում որևէ անհատ չի կարող հանդիսանալ մեկ հայտի ղեկավար և միաժամանակ հանդիսանալ մեկ այլ խմբի անդամ:
7. Յուրաքանչյուր հայտ գնահատվելու է առանձին և անկախ, հետևաբար այն չպետք է կազմի սույն ծրագրի շրջանակներում ներկայացվող այլ հայտերի մաս կամ որևէ կերպ կախված լինի դրանցից:
8. Յուրաքանչյուր հայտ պետք է ներառի հաստատման և երաշխավորման առանձին նամակներ, որոնք պետք է ստորագրված լինեն հետևյալ անձանց կողմից.
  - ա) Հայտատու. հաստատելով, որ նա լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատող (սովորող) գիտաշխատող (ասպիրանտ) է, իր հետազոտական գործունեության շրջանակներում ներգրավված է լրիվ դրույքով աշխատանքի մեջ և, դրամաշնորհի արժանանալու դեպքում, ցանկություն ունի հրաժարվելու ցանկացած լրացուցիչ եկամուտից:
  - բ) Կազմակերպության լիազորված ներկայացուցիչ և դիմորդի գիտական ղեկավար(ներ) (ասպիրանտների համար). Երաշխավորելով, որ դիմորդը իր հետազոտական գործունեության շրջանակներում իրենց կազմակերպությունում ներգրավված է լրիվ դրույքով աշխատանքի մեջ և ընդգծելով, որ կազմակերպությունը աջակցում է ներկայացված հետազոտական նախագծին:
9. Մեկ կազմակերպության կողմից ներկայացվող հայտերի քանակը չի սահմանափակվում:
10. ԳԱՏԱՀ-ը և ԱՄՆ ՔՀՄՀ-ն իրավունք են վերապահում սահմանափակել իրենց ծրագրերում ցանկացած անձի կամ կազմակերպության մասնակցության իրավունքը:

#### **IV. Նախապատվությունները**

Հավասար գիտական չափանիշներով հայտերի դեպքում՝ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն, ԳԱՏԱՀ-ը և ԱՄՆ ՔՀՄՀ-ն նախապատվություն կտան այն հայտերին, որոնք պարունակում են հետևյալ կետերից որևէ մեկը կամ մի քանիսը.

- գիտական խնդիրների լուծման նոր հետազոտական մեթոդներ և հատկապես այնպիսիք, որոնք նորություն են ՀՀ համար,
- հետազոտական թեմաներ, որոնք նպատակ են հետապնդում լուծելու ՀՀ համար արդիական գիտատեխնիկական խնդիրներ կամ զարգացնելու ՀՀ քաղաքացիական բնույթի հետազոտությունների միջավայրը,
- հետազոտական թեմաներ, որոնք մեծ հավանականություն ունեն հրատարակվելու միջազգային առաջատար գիտական ամսագրերում և ներկայացվելու միջազգային գիտաժողովներում և գիտական հանդիպումների ժամանակ,
- կին դիմորդներ,
- դիմորդներ Երևանից դուրս տեղաբաշխված գիտական կազմակերպություններից,
- դիմորդներ, որոնք մինչև դիմումի ներկայացումը դրամաշնորհի չեն արժանացել ԳԱՏԱՀ-ի, ԱՄՆ ՔՀՄՀ-ի կամ ֆինանսավորում տրամադրող որևէ այլ միջազգային կազմակերպության կողմից:

#### **V. Հայտերի ներկայացման ցուցումներ**

Դիմորդները պետք է հայտերը ներկայացնեն ինչպես ՀՀ ԿԳՆ ԳՊԿ ու ԳԱՏԱՀ, այնպես էլ ԱՄՆ ՔՀՄՀ՝ ստորև նշված երկու եղանակով: Այն հայտերը, որոնք կներկայացվեն ՀՀ ԿԳՆ ԳՊԿ, ԳԱՏԱՀ և ԱՄՆ ՔՀՄՀ ոչ այնպես, ինչպես նշված է ստորև, կհամարվեն **անվավեր**: Հայտերը պետք է ներկայացվեն մինչև 2009թ. հոկտեմբերի 30-ը՝ Երևանի ժամանակով մինչև ժամը 18:00-ը:

- 1) ԳԱՏԱՀ. Բոլոր դիմորդները պետք է իրենց հայտերը ԳԱՏԱՀ-ին ներկայացնեն ստորև նշված փոստային և էլեկտրոնային հասցեներով հետևյալ կերպ.
  - Հայերեն լեզվով մեկ բնօրինակ թղթի վրա և մեկ էլեկտրոնային տարբերակ:
  - Անգլերեն լեզվով մեկ բնօրինակ թղթի վրա և մեկ էլեկտրոնային տարբերակ:
  - Դիմորդը հայտի բնօրինակի հետ պետք է ներկայացնի իր հաստատման և երաշխավորման նամակների բնօրինակները:
  - Հայտի էլեկտրոնային տարբերակները պետք է լինեն «Microsoft Word»-ի կամ «PDF»-ի ձևաչափերով: Բոլոր էլեկտրոնային տարբերակները պետք է ներկայացվեն որպես մեկ էլեկտրոնային ֆայլ:
  - «.zip» ձևաչափով ներկայացված հայտերը, որոնք պարունակում են մի քանի փաստաթուղթ, չեն ընդունվի:
  - ԳԱՏԱՀ-ը չի ընդունի ֆաքսով ուղարկված հայտեր:
  - Բոլոր հայտերը պետք է տպվեն 1.5 տողամեջ հեռավորությամբ, տառերի 12-րդ չափսով («Sylfaen» հայերենի և «Times New Roman» անգլերենի համար), 2.5 սմ լուսանցքով ինչպես կողքերից, այնպես էլ էջի վերևից և ներքևից, իսկ բոլոր էջերը՝ ներառյալ «Ձևերը», պետք է հաջորդաբար համարակալվեն վերևի աջ անկյունում:  
ԳԱՏԱՀ-ի հասցեն.

*ա) հայտի բնօրինակի ներկայացման համար.*

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ (ԳԱՏԱՀ)

Ազատության պող. 26

Երևան, 0014

բ) *հայտի էլեկտրոնային տարբերակի ներկայացման համար.*

ecsp-09@nfsat.am

Հայտերի ձևակերպման հետ հարցեր ունենալու դեպքում կարող եք դիմել ԳԱՏԱՀ-ի կողմից

ծրագրի ղեկավար՝

Ալեքսանդր Խաչունցին,

Հեռ.՝ 28-81-92

khas@nfsat.am

- 2) ԱՄՆ ՔՀՄՀ. Հայտերը պետք է ներկայացվեն ՔՀՄՀ մինչև 2009թ. հոկտեմբերի 30-ը՝ Երևանի ժամանակով մինչև ժամը 18:00-ը, հետևյալ կերպ՝
- Մեկ էլեկտրոնային տարբերակ անգլերեն լեզվով՝ Armenia@crdf.org էլ. հասցեով:
  - Հայտի էլեկտրոնային տարբերակները պետք է լինեն «Microsoft Word»-ի կամ «PDF»-ի ձևաչափերով: Բոլոր էլեկտրոնային տարբերակները պետք է ներկայացվեն՝ որպես մեկ էլեկտրոնային ֆայլ:
  - «.zip» ձևաչափով ներկայացված հայտերը, որոնք պարունակում են մի քանի փաստաթղթեր, չեն ընդունվի:
  - ԱՄՆ ՔՀՄՀ-ն չի ընդունի ֆաքսով ուղարկված հայտեր:
  - Բոլոր հայտերը պետք է տպվեն 1.5 տողամեջ հեռավորությամբ, տառերի 12-րդ չափսով (“Times New Roman”), 2.5 սմ լուսանցքով ինչպես կողքերից, այնպես էլ էջի վերևից և ներքևից, իսկ բոլոր էջերը՝ ներառյալ «Ձևերը», պետք է հաջորդաբար համարակալվեն վերևի աջ անկյունում:
- 3) ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ը. Բոլոր դիմորդները պետք է իրենց հայտերը ՀՀ ԿԳՆ ԳՊԿ ներկայացնեն ստորև նշված փոստային և էլեկտրոնային հասցեներով հետևյալ կերպ.
- Հայերեն լեզվով մեկ բնօրինակ թղթի վրա և մեկ էլեկտրոնային տարբերակ:
  - Անգլերեն լեզվով մեկ բնօրինակ թղթի վրա և մեկ էլեկտրոնային տարբերակ (միայն բնական, ճշգրիտ և տեխնիկական գիտությունների համար):
  - Դիմորդը հայտի բնօրինակի հետ պետք է ներկայացնի իր հաստատման և երաշխավորման նամակների բնօրինակները:
  - Հայտի էլեկտրոնային տարբերակները պետք է լինեն «Microsoft Word»-ի կամ «PDF»-ի ձևաչափերով: Բոլոր էլեկտրոնային տարբերակները պետք է ներկայացվեն որպես մեկ էլեկտրոնային ֆայլ:
  - «.zip» ձևաչափով ներկայացված հայտերը, որոնք պարունակում են մի քանի փաստաթուղթ, չեն ընդունվի:
  - ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն չի ընդունի ֆաքսով ուղարկված հայտեր:
  - Բոլոր հայտերը պետք է տպվեն 1.5 տողամեջ հեռավորությամբ, տառերի 12-րդ չափսով (“Sylfaen” հայերենի և “Times New Roman” անգլերենի համար), 2.5 սմ լուսանցքով ինչպես կողքերից, այնպես էլ էջի վերևից և ներքևից, իսկ բոլոր էջերը՝ ներառյալ «Ձևերը», պետք է հաջորդաբար համարակալվեն վերևի աջ անկյունում:
- ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի հասցեն.

*ա) հայտի բնօրինակի ներկայացման համար.*

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե (ՀՀ ԿԳՆ ԳՊԿ)

Օրբելի եղբայրների 22

Երևան, 0028

բ) հայտի էլեկտրոնային տարբերակի ներկայացման համար.

info@scs.am

Հայտերի ձևակերպման հետ հարցեր ունենալու դեպքում կարող եք դիմել ՀՀ ԿԳՆ ԳՊԿ–ի կողմից ծրագրի համակարգող՝

Տիկ. Գրետա Տոնյանին,

Գիտահետազոտական աշխատանքներին աջակցող Բաժնի ղեկավար,

Հեռ: 21-01-40-113

info@scs.am

## **VI. Հայտի ներկայացման ուղեցույց**

Յուրաքանչյուր հայտ պետք է պարունակի ստորև նշված բոլոր բաղկացուցիչ տարրերը: Հաշվի կառնվեն միայն այն հայտերը, որոնք ներառում են այս տեղեկությունները:

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ.** Հայտը չպետք է գերազանցի 20 էջը՝ ներառյալ բոլոր «Ձևերը»: 20 էջը գերազանցող բոլոր հայտերը համարվելու են **անվավեր:**

1. **Տիտղոսաթերթ («Ձև-Ա»)**՝ Տիտղոսաթերթը պետք է ներառի հիմնական տեղեկություններ նախագծի, դիմորդի, հայկական կազմակերպության տնօրենի և դիմորդի (ասպիրանտի համար) պաշտոնական գիտական ղեկավարի վերաբերյալ:
2. **Ամփոփագիր**՝ Մեկ համառոտ պարբերությամբ ամփոփ ներկայացնել նախագծի բոլոր կարևոր դրույթները՝ կենտրոնանալով նպատակների, մեթոդների և ակնկալվող արդյունքների վրա: Ցանկալի է, որ Հայտի անգլերեն տարբերակում ներառվի նաև «Ամփոփագրի» ռուսերեն տարբերակը:
3. **Նախագծի բովանդակություն** (առավելագույնը 5-7 էջ՝ ներառյալ բոլոր գրաֆիկները, գծագրերը, լուսանկարները կամ մեջբերվող հղումները):
  - Դրամաշնորհի ժամանակահատվածում կատարվելիք գիտական հետազոտության բնութագիրը՝ նրա կարևորությունը, համապատասխանությունը դիմորդի ներկայիս հետազոտական աշխատանքին, ակնկալվող արդյունքները և հնարավոր ներդրումը ժամանակակից գիտատեխնիկական խնդիրներ լուծելու հարցում:
  - Հաջողության հասնելու համար օգտագործվող մոտեցումները, նպատակները, հենքերը և չափորոշիչները:
  - Նախագծից ակնկալվող արդյունքները, և թե ինչպես են դրանք առնչվում Բաժին VIII–ում թվարկված ՀՀ ԿԳՆ ԳՊԿ–ի, ԳԱՏԱՀ–ի և ԱՄՆ ՔՀՄՀ–ի գնահատման չափանիշների հետ:
  - Նախագծում օգտագործվող սարքավորումները՝ հատուկ ուշադրություն դարձնելով սույն Հայտի ֆինանսական աջակցության շրջանակներում պահանջվող սարքավորման բոլոր հայտերի հիմնավորման վրա:
  - Դիմորդի, ինչպես նաև «Ա- դասի» մրցույթի հայցվորների դեպքում ասպիրանտի ղեկավարի ինքնակենսագրությունները: Հայտը պետք է պարունակի մեկ կամ երկու էջից բաղկացած երկու («Ա- դասի») կամ մեկ («Բ- դասի») ինքնակենսագրություն, որոնցից մեկը դիմորդին է, մյուսը՝ նրա գիտական ղեկավարին (ասպիրանտների համար): Յուրաքանչյուր ինքնակենսագրություն պետք է ներառի անունը, կրթության մասին տվյալները, ներկա և անցյալ աշխատավայրերը՝ ամսաթվերով, որակավորման բնագավառները և հետևյալ կարգերին համապատասխանող հրատարակությունների ցուցակը. գրախոսվող ամսագրեր անգլերենով, գրախոսվող ամսագրեր այլ լեզուներով, գիտաժողովների ամփոփագրերում հրատարակված հոդվածներ, ինչպես նաև նախագծի հետ ամենաշատն առնչվող հինգ գրախոսվող ամսագրերի ամբողջական մեջբերումներ:

Հասկանալի է, որ դիմորդը կարող է այս կարգերից որևէ մեկին կամ դրանց բոլորին պատկանող հոդվածներ չունենալ:

4. **Բյուջե («Ձև-Բ»)**՝ Ներկայացված «Ձև-Բ»-ում պարունակվող տեղեկությունների հիման վրա պետք է ներկայացնել նախագծի բյուջեն: «Ձև-Բ»-ն պետք է ամբողջությամբ լրացվի: Դիմորդները պետք է ներկայացնեն մեկ «Ձև-Բ» դրամաշնորհի լրիվ ժամանակահատվածի համար: Դրամաշնորհի սահմանված առավելագույն գումարը՝ 1,5 մլն դրամ (\$4,000) «Ա- դասի» դեպքում և 7,0 մլն դրամ (\$18,000) «Բ- դասի» դեպքում, չպետք է գերազանցվի:
5. **Բյուջեի մեկնաբանում**՝ Առանձին թերթի վրա պետք է բացատրվեն բյուջեի բոլոր կետերը: Թերթի վրա պետք է հստակ նշված լինի «Բյուջեի մեկնաբանություն» վերնագիրը: Շատ կարևոր է, որ գործուղման կամ նյութերի և ծառայությունների համար անհրաժեշտ բոլոր ծախսերը բացատրվեն և հիմնավորվեն: Բյուջեի մեկնաբանման մեջ ներկայացվելիք տեղեկությունների համար դիմորդները պետք է ծանոթանան Բաժին XI-ում շարադրված բյուջե կազմելու ցուցումների “Թույլատրելի ծախսեր” կետի հետ:
6. **Դիմորդի հաստատման նամակ**՝ Այս նամակը պետք է ստորագրվի դիմորդի կողմից և համառոտ կերպով հաստատի, որ նա իր ասպիրանտական գործունեության շրջանակներում ներգրավված է լրիվ դրույքով աշխատանքի մեջ, և դրամաշնորհի արժանանալու դեպքում կիրառարվի ցանկացած լրացուցիչ եկամուտից:
7. **Կազմակերպության երաշխավորման նամակ**՝ Այս նամակը պետք է ստորագրի կազմակերպության լիազորված ներկայացուցիչը և դիմորդի գիտական ղեկավար(ներ)ը (ասպիրանտների համար)՝ երաշխավորելով, որ դիմորդը իր գործունեության շրջանակներում իրենց կազմակերպությունում ներգրավված է լրիվ դրույքով աշխատանքի մեջ, ինչպես նաև ընդգծելով, որ կազմակերպությունը աջակցում է ներկայացված հետազոտական նախագծին:

## **VII. Ժամկետները**

- Հայտերը ՀՀ ԿԳՆ ԳՊԿ, ԳԱՏԱՀ և ԱՄՆ ՔՀՄՀ ներկայացնելու վերջին ժամկետը 2009թ., հոկտեմբերի 30-ն է՝ Երևանի ժամանակով ժամը 18:00-ը:
- Արդյունքների ամփոփման և հայտերի վավերականության մասին տեղեկությունները նախատեսվում է դիմորդներին հայտնել մինչև 2009թ. նոյեմբերի 7-ը:
- Մրցույթի արդյունքները ակնկալվում է հայտարարել 2009թ. դեկտեմբերի 10-ին:
- Դրամաշնորհները նախատեսվում է ակտիվացնել 2010թ. հունվարի 1-ից:

## **VIII. Հայտերի փորձաքննությունը**

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ, ԳԱՏԱՀ և ԱՄՆ ՔՀՄՀ ներկայացնելուց հետո բոլոր հայտերը ենթարկվելու են մանրակրկիտ ստուգման՝ դրանց ամբողջականության և վավերության առումով: ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն, ԳԱՏԱՀ-ը և ԱՄՆ ՔՀՄՀ-ն դիմելու են գիտական անկախ փորձագետների՝ գնահատելու բոլոր վավերական հայտերը ստորև նշված չափանիշներով: ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն, ԳԱՏԱՀ-ը և ԱՄՆ ՔՀՄՀ-ն իրավունք են վերապահում անհրաժեշտության դեպքում դիմելու դիմորդին կամ նրա գիտական ղեկավարին (ասպիրանտների համար)՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ, ԳԱՏԱՀ-ը և ԱՄՆ ՔՀՄՀ-ն համատեղ կընտրեն այն հայտերը, որոնք արժանանալու են դրամաշնորհի:

## Գնահատման չափանիշները

1. **Անձնակազմի կարողությունները.** Դիմորդի և (անհրաժեշտության դեպքում) նրա գիտական ղեկավարի կարողությունը ներկայացված հետազոտության իրագործման հարցում: Հետազոտողների ունակությունները, ինչպես նաև առաջարկվող նախագծի գիտական արժանիքները: Նախագծի իրականացման համար բոլոր մասնակիցների կողմից նախատեսվող տեխնիկական միջոցների և հնարավորությունների համապատասխանությունը նախագծի իրականացմանը:
2. **Հետազոտության պլանավորումը.** Առաջադրվող մոտեցման տեխնիկական ուժը, նախագծի նպատակների պարզությունն ու ռացիոնալությունը, աշխատանքն իրագործելու համար տեխնիկական միջոցների և հնարավորությունների համապատասխանությունը նախագծի իրականացմանը:
3. **Նախագծի գիտական արժանիքները.** Հավանականությունը, որ նախագծի իրականացումը կարող է բերել նոր գիտելիքների կամ նորարարական առաջարկությունների, որոնք էական նշանակություն կունենան գիտական և ճարտարագիտական մեկ կամ մի քանի բնագավառների համար: Հավանականությունը, որ նախատեսված հետազոտությունը շահավետ կլինի ընդհանրապես հանրությանը և, մասնավորապես, Հայաստանի Հանրապետությանը, ինչպես նաև՝ նման շահավետության բնույթը:
4. **Մասնագիտական համապատասխանությունը.** Առաջադրված աշխատանքի համապատասխանությունը դիմորդի մասնագիտական նպատակներին, ինչպես նաև մասնագիտական բնագավառին ու հետաքրքրություններին: Առաջադրված աշխատանքի ներուժը՝ դիմորդի մասնագիտական նպատակները և զարգացումը հեշտացնելու հարցում: Հավանականությունը, որ աշխատանքն ուղի կհարթի համատեղ աշխատանքների, հետագա հաջող ֆինանսավորման, թեկնածուական հաջող պաշտպանության, ինչպես նաև միջազգային գրախոսվող ամսագրերում հոդվածների տեղադրման համար:

### **IX. Մտավոր սեփականություն**

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ, ՔՀՄՀ-ն և ԱՄՆ ԳՍՏԱՀ-ը չեն հավակնում դրամաշնորհի արդյունքում առաջացած մտավոր սեփականության հեղինակային իրավունքներին: ՀՀ ԿԳՆ ԳՊԿ, ԳՍՏԱՀ-ի և ԱՄՆ ՔՀՄՀ-ի հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ հետևեն, որպեսզի մտավոր սեփականության հեղինակային իրավունքները հավասար բաշխվեն դիմորդի, նրա գիտական ղեկավարի և կազմակերպության միջև:

### **X. Գաղտնիություն**

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ, ԳՍՏԱՀ-ը և ԱՄՆ ՔՀՄՀ-ն բոլոր հայտերը դիտելու են որպես գաղտնի տեղեկություն և պահանջելու են, որ փորձագետները նույնպես պահպանեն հայտերի գաղտնիությունը: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ ԿԳՆ ԳՊԿ և այցելել հետևյալ կայքի «Քաղաքականություն և ընթացակարգեր» բաժինը՝ <http://www.crdf.org/policies/>

## **XI. Թույլատրելի ծախսեր**

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ, ԳԱՏԱՀ-ը և ԱՄՆ ՔՀՄՀ-ն չեն դիտարկի ոչ մի հայտ, որտեղ կհայցվի սահմանված առավելագույն աջակցության չափերը գերազանցող գումար (տես հոդված II): Դրամաշնորհը տրամադրելու դեպքում՝ ծախսերի հիմնավորվածության տեսակետից, հայցվող բյուջեն կարող է վերանայվել ՀՀ ԿԳՆ ԳՊԿ, ԳԱՏԱՀ -ի և ԱՄՆ ՔՀՄՀ -ի աշխատակիցների կողմից: Սույն ծրագրի պայմանների համաձայն՝ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ն, ԳԱՏԱՀ-ը և ԱՄՆ ՔՀՄՀ-ն թույլատրելի են համարում հետևյալ ծախսերը.

### **ա. Անհատական ֆինանսական աջակցություն կամ կրթաթոշակ.**

«Ա- դասի» դեպքում. սույն ծրագրի անհատական ֆինանսական աջակցությունը (ԱՖԱ), որն ըստ էության կրթաթոշակ է, սահմանվում է՝ որպես նախագծում հետազոտությամբ զբաղվող ասպիրանտին լրիվ ծանրաբեռնվածությամբ հետազոտական աշխատանքի դիմաց վճարվող գումար: Սույն ծրագրի համար ԱՖԱ կրթաթոշակը տրվում է միայն 100%-ով հետազոտական աշխատանքում ներգրավված անձանց: Լրիվ ծանրաբեռնվածությամբ աշխատող ասպիրանտների աշխատանքային ամիսը հաշվարկվում է 22 օրով, իսկ աշխատանքային օրը՝ 8 աշխատանքային ժամով: Անհատական ֆինանսական աջակցության կամ կրթաթոշակի թույլատրելի ընդհանուր գումարը չպետք է գերազանցի դրամաշնորհի ընդհանուր գումարի 50%-ը, դրամաշնորհի ընդհանուր գումարի նվազագույնը 50%-ը պետք է նախատեսվի հետազոտության կարիքների, գիտաժողովների մասնակցության և այլնի համար: Առավելագույնը դրամաշնորհի ընդհանուր գումարի 2.5%-ի չափով՝ տարեկան, կարելի է նախատեսել որպես կազմակերպության «վերադիր ծախսեր»: Մյուս կողմից, ՀՀ ԿԳՆ ԳՊԿ, ԳԱՏԱՀ-ը և ԱՄՆ ՔՀՄՀ-ն ակնկալում են, որ դրամաշնորհի ընթացքում շնորհառու կազմակերպությունները կամավոր կզիջեն թույլատրելի «վերադիր ծախսերը» ի նպաստ իրենց իսկ կազմակերպությունում իրականացվող հետազոտական աշխատանքի:

«Բ- դասի» դեպքում. այս մրցույթի շրջանակում լրիվ ծանրաբեռնվածությամբ հետազոտական աշխատանքի դիմաց թույլատրվում է նախատեսել մինչև դրամաշնորհի ընդհանուր գումարի 60%-ը ԱՖԱ-ի և կրթաթոշակի համար: Դրամաշնորհի ղեկավարը բյուջեում կարող է նախատեսել 1 կամ 2 լրիվ ծանրաբեռնվածությամբ հետազոտական աշխատանքներում ներգրավված ասպիրանտի կրթաթոշակ: Իսկ դրամաշնորհի ընդհանուր գումարի մնացած 40%-ը կարելի է նախատեսել նախագծի կարիքների և կազմակերպության «վերադիր ծախսերի» (առավելագույնը դրամաշնորհի ընդհանուր գումարի 2.5%-ի չափով՝ տարեկան) համար: Մյուս կողմից, ՀՀ ԿԳՆ ԳՊԿ, ԳԱՏԱՀ-ը և ԱՄՆ ՔՀՄՀ-ն ակնկալում են, որ դրամաշնորհի ընթացքում շնորհառու կազմակերպությունները կամավոր կզիջեն թույլատրելի «վերադիր ծախսերը» ի նպաստ իրենց իսկ կազմակերպությունում իրականացվող հետազոտական աշխատանքի:

բ. Նյութեր և ծառայություններ. հետազոտական սարքավորումների ձեռքբերման ծախսեր՝ ներառյալ համակարգիչները և հեռահաղորդակցման սարքավորումները, գիտական ամսագրերի և հեռահաղորդակցման ծառայությունների բաժանորդագրությունները և գիտահետազոտության ընթացքում օգտագործվող այլ նյութերը: 200,000 ՀՀ դրամը (մոտ 500 ԱՄՆ դոլարի չափով) գերազանցող յուրաքանչյուր հայցվող սարքավորում պետք է հատուկ բացատրվի և հիմնավորվի բյուջեի մեկնաբանության մեջ:

գ. Գործուղումներ. գործուղումների համար նախատեսվող գումարները կարող են օգտագործվել ինչպես հանրապետական, այնպես էլ միջազգային գիտական միջոցառումներին մասնակցելու համար: Գործուղման նպատակը և դրա հետ կապված

բոլոր ծախսերը պետք է հիմնավորվեն բյուջեի մեկնաբանության մեջ: Բյուջեն պատրաստելիս պետք է հաշվի առնել հետևյալ ցուցումները՝

**դ. Միջազգային տրանսպորտ.** Հայաստանից գործուղման մեկնելիս պետք է ձեռք բերել հնարավորինս էժան ավիատոմսեր: Հնարավորության դեպքում բոլոր ճանապարհորդությունները պետք է կատարվեն ամերիկյան ավիաընկերություններով, ինչը պարտադիր պայման է հանդիսանում անդրովկիանոսյան ճանապարհորդությունների համար: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ կայքը՝ [http://www.crdf.org/policies/policies\\_show.htm?doc\\_id=291723](http://www.crdf.org/policies/policies_show.htm?doc_id=291723)

**ե. Ապրելավարձ միջազգային գործուղումների համար.** Երկու շաբաթ կամ ավելի կարճ տևողություն ունեցող այցերի համար ապրելավարձը պետք է հաշվարկվի՝ համաձայն ՀՀ և ԱՄՆ կառավարությունների կողմից սահմանված օրապահիկի ցուցումների (կախված գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրից): ԱՄՆ կառավարության կողմից սահմանված օրապահիկի վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար դիմորդները կարող են այցելել <http://www.govexec.com/travel> կամ <http://policyworks.gov/org/main/mt/homepage/mtt/perdiem/perd05d.html> ինտերնետային կայքերը: ՀՀ կառավարության կողմից սահմանված օրապահիկների համար տես՝ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 25-ի N 2335-Ն որոշումը: Երկու շաբաթից ավել տևողություն ունեցող այցերի համար դիմորդները կարող են հայցել ամսական մինչև 2000 ԱՄՆ դոլար կամ դրա համարժեքը: Այս գումարի մեջ են մտնում բոլոր ծախսերը՝ ներառյալ առողջական ապահովագրությունը, որը պարտադիր է: Արտասահմանյան գործուղման համար նախատեսվող ընդհանուր ժամանակը չպետք է գերազանցի 2 ամիսը՝ դրամաշնորհի տասներկուամսյա կտրվածքով:

**դ. Ենթապայմանագրային համագործակցություն.** հայկական այն կազմակերպություններին հատկացվող ծախսերի համար, որոնք կապված են տվյալ նախագծի հետ: Ենթապայմանագրային համագործակցություն է կոչվում դրամաշնորհի նախագծի որևէ մասի վերաբաշխումը դիմողի կազմակերպությունից գատ որևէ այլ կազմակերպության միջև: Ենթապայմանագրային համագործակցությունը կարող է լինել ենթապայմանագրով կատարվող աշխատանք, որը պետք է ներառի այս բաժնում ներկայացված բոլոր թույլատրելի ծախսերը: Ենթապայմանագրային համագործակցության շրջանակներում ներգրավված ամբողջ սարքավորումը և լրիվ աշխատակազմը պետք է հատուկ թվարկվեն և նկարագրվեն հայտի մեջ: Յուրաքանչյուր ենթապայմանագրային համագործակցության համար «Բյուջեի մեկնաբանության» մեջ անհրաժեշտ է ներկայացնել առանձին բյուջեի հիմնավորում:

## **XII. Հատուկ ցուցումներ**

Քանի որ սույն ծրագիրն իրականացվում է նաև ԱՄՆ կառավարության կողմից ԱՄՆ ՔՀՄՀ-ին տրամադրված միջոցներով՝ Հայաստանի գիտության և տեխնոլոգիայի զարգացմանը նպաստելու համար, դրամաշնորհը ենթարկվում է նաև ԱՄՆ օրենքներին և կանոնադրությանը:

### **Ա. Հատուկ ցուցումներ մարդկային օրգանիզմի հետ առնչվող հետազոտությունների վերաբերյալ.**

Մարդկային օրգանիզմի հետ առնչվող հետազոտությունների մասին տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ ԿԳՆ ԳՊԿ և այցելել հետևյալ կայքը՝

[http://www.crdf.org/policies/policies\\_show.htm?doc\\_id=305889](http://www.crdf.org/policies/policies_show.htm?doc_id=305889)

**Բ. Հակակոռուպցիոն քաղաքականություն և այլ հատուկ դրույթներ.**

Տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՀ ԿԳՆ ԳՊԿ և այցելել հետևյալ կայքը՝  
[http://www.crdf.org/policies/policies\\_show.htm?doc\\_id=296470](http://www.crdf.org/policies/policies_show.htm?doc_id=296470)

**XIII. Ընդհանուր տեղեկություններ**

**Ա. Տեղեկություններ ԳԱՏԱՀ-ի մասին**

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը (ԳԱՏԱՀ) անկախ, ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1997թ-ին՝ համաձայն ՀՀ օրենսդրության:

ԳԱՏԱՀ-ի նպատակներն են.

- ◆ Նպաստել գիտության տարբեր բնագավառներում միջազգային չափանիշներին համապատասխանող հետազոտությունների և տեխնոլոգիաների զարգացմանը, ինչպես նաև զարգացնել Հայաստանի Հանրապետության գիտական և ճարտարագիտական ներուժը:

- ◆ Մրցութային հիմունքներով անմիջական աջակցություն (դրամաշնորհներ) տրամադրել գիտահետազոտական նախագծերին:

ԳԱՏԱՀ-ի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք այցելել հետևյալ կայքը՝ <http://www.nfsat.am>:

**Բ. Տեղեկություններ ԱՄՆ ՔՀՄՀ-ի մասին**

Նախկին ԽՍՀՄ-ի անկախ հանրապետությունների համար ստեղծված ԱՄՆ ՔՀՄՀ ոչ առևտրային կազմակերպություն է, որը կոչված է աջակցելու ԱՄՆ-ի և ԱՊՀ երկրների գիտնականների և ճարտարագետների համատեղ հետազոտություններին: ԱՄՆ ՔՀՄՀ-ի նպատակն է ֆինանսավորել քաղաքացիական հիմնարար և կիրառական հետազոտությունները ԱՊՀ երկրներում, ինչպես նաև նպաստել ռազմական ոլորտի նախկին մասնագետների փոխարկմանը և տարածաշրջանի շուկայական տնտեսությունների զարգացմանը: ԱՄՆ ՔՀՄՀ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր ծրագրերը պետք է ուղղված լինեն քաղաքացիական նպատակների իրագործմանը և իրականացվեն քաղաքացիական միջավայրում:

ԱՄՆ ՔՀՄՀ-ի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել հետևյալ կայքը՝ <http://www.crdf.org> :

Սույն Ծրագրի համար ֆինանսական աջակցությունը տրամադրվել է նաև ԱՄՆ կառավարության կողմից՝ Հայաստանի գիտության և տեխնոլոգիայի զարգացմանը նպաստելու նպատակով:

Հայտի մեջ պարունակվող անհրաժեշտ փաստաթղթերի ցուցակ՝
1. <input type="checkbox"/> Տիտղոսաթերթ («Ձև-Ա»)
2. <input type="checkbox"/> Բյուջե («Ձև-Բ»)
3. <input type="checkbox"/> Դիմորդի և նրա գիտական ղեկավարի կենսագրությունները
4. <input type="checkbox"/> Նախագծի նկարագրություն
5. <input type="checkbox"/> Դիմորդի դիմումը
6. <input type="checkbox"/> Երաշխավորագիր կազմակերպության կողմից
7. <input type="checkbox"/> Անհրաժեշտ փաստաթղթեր միայն մարդու վրա ազդեցություն ունեցող հետազոտություններ ընդգրկող հայտերի համար



**«Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության  
ծրագիր –2009»**

**«Ձև-Ա» – ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ**

**Նախագծի հիմնական տեղեկություններ**

Հայցվող ընդհանուր գումարը		Գիտական բնագավառը	
Նախագծի վերնագիրը			
Նախագծի համառոտ նկարագրությունը (ոչ ավել քան 25 բառ)			

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԻՄՈՐԴԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ (ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԵՏԱԶՈՏՈՂ)**

1. Ա., Ա., Հ. (լրիվ)			
Ծնված		Անձնագիր #	
Մեռը		Սոց. Քարտ #	
Հեռախոս		Ֆաքս	
Էլ. փոստ		Ինտերնետային կայքը	
Որ ԲՈՒՀ-ի շրջանավարտ եք			
Վերջին շնորհված գիտական աստիճանի բնագավառը		Տարեթիվը	
Ասպիրանտուրա ընդունման տարեթիվը		Բնագավառը	
ԳԱՏԱՀ-ից կամ այլ հիմնադրամից նախկինում ստացել ե՞ք արդյոք որևէ դրամաշնորհ	ԱՅո <input type="checkbox"/>	ՈՉ <input type="checkbox"/>	
<b>Եթե «Այո» , ապա նշեք ծրագրի հապավումը և շնորհի համարը</b>			
Ունե՞ք արդյոք որևէ բարեկամ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ում, կամ ԳԱՏԱՀ-ում	ԱՅո <input type="checkbox"/>	ՈՉ <input type="checkbox"/>	
<b>Եթե «Այո» , ապա նշեք անունը, ազգանունը, պաշտոնը</b>			

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՍՊԻՐԱՆՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (միայն «Ա- և Գ-դասերի» համար)**

Կազմակերպությունը			
Կազմակերպության Էլ. փոստի հասցեն			
կազմակերպ. ղեկավարի Ա., Ա., Հ. -ը			
Ղեկավարի կոնտակտ. տվյալները (հեռ, ֆաքս, էլ.փոստ)			
Գիտական ղեկավարը (Ա.Ա.Հ)			
Գիտական ղեկավարի կոնտակտ. տվյալները (հեռ, ֆաքս, էլ.փոստ)			
Մեռը		Գիտական աստիճանը	
Բնագավառը		Պաշտպանության տարեթիվը	
ԳԱՏԱՀ-ից նախկինում ստացել ե՞ք որևէ դրամաշնորհ		ԱՅո <input type="checkbox"/>	ՈՉ <input type="checkbox"/>
<b>Եթե «Այո» , ապա նշեք ծրագիրը և շնորհի համարը.</b>			

**Ստորագրություններ (պահանջվում է միայն ՀՀ ԿԳՆ ԳՊԿ և ԳԱՏԱՀ ներկայացվող օրինակների համար)**

Դիմորդի ստորագրությունը		Ամսաթիվը	
«Ա- և Գ-դասերի» ղեպքում գիտական ղեկավարի ստորագրությունը (ասպիրանտների համար)		Ամսաթիվը	
Կազմակերպության ղեկավարի ստորագրությունը և կնիքը		Ամսաթիվը	

**Ստորագրելով սույն Հայտը՝ ես հաստատում եմ, որ ընդունում եմ մրցույթի հայտարարության բոլոր պահանջները և կենթարկվեմ Ծրագրի բոլոր պայմաններին:**

**«Ձև –Բ» – Նախագծի Բյուջե ( Բյուջեն կազմելու համար դիմորդները պետք է ծանոթանան Ծրագրի Ցուցումների Բաժին XI-ում շարադրված “Թույլատրելի ծախսեր” կետի հետ)**

Անհատական ֆինանսական աջակցություն (լրիվ դրույք)			<b>Պահանջվող գումարը</b>
Ա.Ա.Հ	Ամսական ԱԱՀ	Ամիսների քանակը	-----
ԱՆՀԱՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋ ԳՈՒՄԱՐԸ			
<b>ՍԱՐՔԵՐ ԵՎ ՆՑՈՒԹԵՐ</b> (Խնդրվում է թվարկել 200 000 ՀՀ դրամ կամ 500 ԱՄՆ դոլար գերազանցող բոլոր ձեռքբերումները: Դրանք պետք է հիմնավորվեն բյուջեի մեկնաբանության մեջ: Եթե լրացուցիչ տեղ պահանջվի, խնդրում ենք առանձին էջի վրա շարունակել:)			-----
1.			
2.			
3.			
4.			
5.			
Նյութերի և Սարքերի համար նախատեսվող ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
<b>Գործուղումներ</b> (պետք է հիմնավորել բյուջեի մեկնաբանության մեջ)			-----
1. Տեղական տրանսպորտային ծախսեր			
2. Օրապահիկ տեղական գործուղումների համար			
3. Միջազգային տրանսպորտ			
4. Օրապահիկ միջազգային գործուղումների համար			
5. Գործուղումների հետ կապված այլ ծախսեր(օրինակ, վիզա կամ այլ վճարումներ)			
Գործուղումների ծախսերի ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
<b>Ենթապայմանագրային համագործակցություն</b> (պետք է նշվեն ենթապայմանագրային համագործակցության բոլոր կազմակերպությունները, ինչպես նաև համագործակցությունը պետք է մանրամասն նկարագրվի բյուջեի մեկնաբանության մեջ:)			
<b>Ենթապայմանագրերի Անհատական ֆինանսական աջակցություն</b>			
<b>Ազգանուն Ա.</b>	<b>Օրավարձը</b>	<b>Ամսական աշխատ. օրերի քանակը</b> (մինչև 22 օր )	<b>Աշխատ. ամիսների քանակը</b>
<b>Ենթապայմանագրերի Նյութեր և ծառայություններ</b> (Խնդրվում է թվարկել 120 000 ՀՀ դրամ կամ 300 ԱՄՆ դոլար գերազանցող բոլոր կետերը և հիմնավորվել: Եթե լրացուցիչ տեղ պահանջվի, խնդրում ենք առանձին էջի վրա շարունակել)			
1.			
2.			
Ենթապայմանագրային համագործակցության ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ			
<b>Այլ ծախսեր</b> (Խնդրվում է հիմնավորել բյուջեի մեկնաբանության մեջ)			

<b>Հայցվող ընդհանուր գումարը</b>	
<b>Այլ աղբյուրներից ստացվող ներդրումների ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԸ</b> (Եթե նախատեսվում է, խնդրվում է ներկայացնել Բյուջեի մեկնաբանության	

Ստացված է \_\_\_\_\_

Ամսաթիվ

ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի աշխատակցի ստորագրությունը

Ստացված է \_\_\_\_\_

Ամսաթիվ

ԳԱՏԱՀ-ի աշխատակցի ստորագրությունը